նորայ մեռացէ պատուելի 'ի մէնջ մեր, և այս ազգ որում յիշատակի հռոմայեցիք նախնին սոցայ գտաւ երկու երիտասարդէ եղբօրէ որում Աւագն անուան իւր Հռոմ, և կրտսեր Իւլոս, այս հռոմ և Իւլոսս գտան ըստ բնութեամբ անձամբ զուարդ և սրտիւք քաջ յատկապէս երկայնամիտ ընդ ամենայն գործս իւրեանց, սոքայ հաւաքեցին ընդ իւրեանց արք քառասուն ըստ նմանութեան անձանց և մտաց և կամաց իւրեանց ետուն զանձինս իւրեանց ընդ միմեանց հաւատարիմ սիրով անխախտելի բարեկամութիւն, և ընդունեցին սահման 'ի մէջ նոցայ անխախտելի Օրինօք, որ ոչ ոք 'ի մէնջ գոցի մեծ և ոչ ոք փոքր եթէ ոչ համահաւասար եղբարք աշխատող վասն ազատութեան և պատուոյն իւրեանց, և գործս այս համարեցին արդարութիւն 'ի յերեսս երկրի և այլն, այս քառասուն անձինքս ելան 'ի դաշտն սկսեցան 'ի գործ աւազակութեան, ոչ կողոպտելով զինչս այլոց վասն ագահութեան և հարբսոտութեան իւրեանց եթէ ոչ վասն հարկաւորութեան և ծախոյ վասն կարեաց կենաց իւրեանց, և աւարն զոր ինչ գտան իւր հաւասարապէս ծախելով 'ի վերայ հասարակապէս կարեաց իւրեանց, և մեացորդքն բարեպէս պահպանէին և հասուցանէին 'ի տեղի սեպհական տերանց և յեռս դարձուցանէին նոցայ, այսպիսի բարեպէս աւազակութիւնս սոցայ հռչակելով 'ի երեսս եր-